

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան դիմեր 10 բուր, կես տարվանը 6 բուր:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանց համարատարած մէջ:
Ոտարարագրողները դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мелк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:
Յայտարարութիւնների համար՝ զմարտի 1-ին
խորանային րոտին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԱԿԱՌԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ խմբագրին:
Նամակ խմբագրին: Ներքին լուրեր—ՍՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. «Новая Газета» լրագրի յօդուած:
Ֆրանսիա. Գամբետտայի ճառը: Նամակ թիւր-
քիայից—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ—ԲՈՎԱՆԱԿԱՌԹԻՒՆ:
Կալուածական խնդրի առիթով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Կիտավոզակ, 31 յուլիսի
Աստրախանի առաջնորդ սրբազան Գէորգ
արքեպիսկոպոս Վեհապետեանը երկու շաբաթ
է որ եկած է տեղս իր փորձաշուր հետ բժշկական:
Վատ եղանակների պատճառով հիւանդները չեն
կարողանում գեղեցիկ դաշտերի խոտակ ողջ վա-
յելել, մնացել են փակված սենեակում: Մտա-
ծելով նրանց տխուր ժամերի վրա, ցանկացայ
որ փոքր ի շատ է միմիկարում հիւանդ պանդուխտ-
ների վշտացած սրտերը, ուղարկեցի նրանց մի
հայ երիտասարդի ձեռքով «Մշակ» լրագրի մէջ
համարը, որ գտնեա փոքր ինչ գրադրին կարգա-
լով: Գծադրաբար նոյն համարում գրված են
եղիլ երկու նամակներ հայր սրբազանի մասին,
որոնք փոխանակ միմիկարելու առաւել սաստ-
կացրին սրբազանի վատ արամադրութիւնը:
Ինչպէս ասում են, պատառում է հայելի նման
ազատաստութիւնը, հաւայ տալով թէ այս ան-
պիտան դաղէթը անպատճառ շամայեցի հայ-
րդոքականն է ուղարկել ինձ, որովհետեւ միայն
ես եմ այստեղ շամայեցի, կարծելով լուսաւոր-
չական բոլոր հայերը պարտ են իրանց աչքերը
ամուր փակել: Մօղղօկ քաղաքի մէջ հարուստ

ազգաւոր վաճառական վարձելով տեղս հայր
սրբազանի և նրա չորս ծառաների համար «Բեշ-
տառ» անուանեալ հիւրանոցում քանի մի սենե-
ակներ, օրական 13 բուր, ամեն ծախքն էլ ինքն
յանն է աւել:
Նաեւ տեղս լուր են տարածել թէ Մանկունի
կաթիկոպոսի պատուին մէկ արձան են կառու-
ցանում, չը գիտեմ որ քաղաքում, և նոյն ար-
ձանի ծախքը հայ երիտասարդները ստորագրու-
թեամբ են ժողովում: Վաճառորդ ինչպէս ես էլ
հարազատ զաւակ մայր աթոռոյ սուրբ Էջմիած-
նի, ուղարկում եմ ձեզ, ազնիւ խմբագիր, մէկ
բուրի և յարգանք խնդրում եմ որ այս փոք-
րիկ լուսն էլ հասուցանէք նոյն ստորագրու-
թեան գումարին, եթէ ձեռարկու է իսկ եթէ ոչ
ուղարկեցէք հայր Ամբրոսիոս վարդապետին, որ
ուսումնարանի համար գնած քաթանների համար
թիւ ու ասեղ աւելի:
Յոյս ունեմ որ ձեր գեղեցիկ թերթի յօդուած-
ների շարքում այս յօդուածն էլ կը տեղաւորէք:
Աւելքօտայր Հայրապետեան Նաշարեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Աստրախան, 28 յուլիսի
Ուղարկելով նուիրատուութեան ցուցակի հետ
20 բուրի 50 կոպէկ գումարը որը հանգանա-
կեցի Աստրախանի հայերի մէջ, յօգուտ վանի
կողմերում պատահած երկրաշարժից վնասված
հայերի, խոնարհաբար խնդրում եմ հասցնէք
այս գումարը ուր հարկն է և նուիրատուների
ցուցակը տեղաւորէք ձեր պատուական թերթի
մէջ: Ահա այդ ցուցակը:
Ստեփաննոս Պոպովսկանց 3 բ., իւրաքանչիւրը
2 բ. Գէորգ և Յովսէփ Գրանիչիկեանց. իւ-
րաքանչիւր 1 բ. Գալուստ Ֆաբրիկանտեանց,

Սարգիս Պորտնովսկանց, Խաչատուր Բահրեանց,
Գէորգ Բորոգինսկանց, Յովհաննէս Ստեփանեանց,
Յարութիւն Միկելայեանց, Ն. Խաչատուր Միրի-
մանեանց, Ստեփաննոս Նազարեանց, Սիմէօն
Սթորեանց և Մկրտիչ Ֆրանգուլեանց, իւրաքան-
չիւրը 50 կ. Գէորգ Ստեփանեանց, Յովհաննէս
Բորոգինսկանց, Յովհաննէս Յովհաննէսեանց, Յա-
րութիւն Պապայեանց և Անյայտ: Ընդամենն է
20 բ. 50 կ. ճանապարհի ծախքը իմ հաշ-
ւին:

Յովհաննէս Սիմէօնեան Սթորեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Իշխան Նապօլէօն Ամատունի վերադարձել է
Թիֆլիս: Ասում են որ նա ամեն տեղ ծագում է
և Պոլսի հայերին և մանաւանդ պատում է թէ
ինչպէս թիւրքաց մայրաքաղաքի հայ խմբագիր-
ները ծառաների պէս ժամերով սպասում էին
նրան նրա բնակարանի նախասենեակում: Հային
է պօղեցիներին:

Օգոստոսի 16-ին գիշերը գողերը կտորեցին
Թիֆլիսի երևանեան հրապարակի վրա գտնվող
Չիթախի գրասենեակը և ուղեցին կողոպտել
նրա մէջ գտնված: Բոլոր հասար, որ քնած էր,
յանկարծ արթնացաւ. գողերը, որոնք թուով չորս
էին, գցեցին մի վերարկու հասասի գլխին, որ
նրանց չը ճանաչէր և փախան, թողնելով գրա-
սենեակի մէջ բազմաթիւ միքենաներ, որոնցով
պէտք է կտորէին գրասենեակի արկղերը:

Օգոստոսի 16-ին գիշերը անյայտ թուրքեր
սպանեցին մի հայ պանդուխտ կրթաւարդին
Օրթաշաւա ասված Թիֆլիսի այգիների կողմե-
րում և փախան:

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են: «Գաւառիս մէջ մեծ
երկիւղ է տիրել գիւղական ժողովրդի և ճանա-
պարհորդների շրջանում: Թէ փոստային կառքե-
րով և թէ ձիաւոր քնացողները բազմով չեն ա-
ւազակների յարձակմունքից: Ամեն օր մարդիկ են
կողոպտվում, աւազակները մտնում են մինչև ան-
գամ գիւղերը և այդտեղ աւար են պահանջում
իրանց համար: Օրերումս քսան այստեսակ դէպ-
քեր են պատահել: Ասում են զաւառում մօտ
200 աւազակ են շրջում:»

Մեզ գրում են Ղուրայից հետեակը ևս: «Մե-
զանում եղանակը չոր է անցնում: Յորենը տեղս
արժէ պուրը 50 կոպէկ, դարին 20 կոպ., իւր-
քը, առհասարակ, առատ է: Բայց գաւառիս
ժողովրդեայ մասում այս տարի երեւում է բաւա-
կան մեծ թւով մորեխ, այնպէս որ կողո տար-
վայ համար մորեխի վնասից մեծ երկիւղ կայ:»

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են: «Հայոց հողերը դը-
պրոցի դրութիւնը, նորենտր հողաբարձութեան
օրով, շատ վատ է և, ինչպէս երևում է, աւելի
էլ կը վատանայ: Հողաբարձութիւնը ամեն ջանք
է գործ դնում դպրոցի արդիւնքները, որքան
հնար է, պակասեցնելու և դպրոցի դաստառնու-
րը քշացնելու: Մեծ դժգոհութիւն կայ վարժա-
պետական խմբի մէջ, որովհետեւ հողաբարձու-
թիւնը կամենում է նրանցից շատերին արձակել:
Նախկին հողաբարձութեան ժամանակ դպրոցի
արդիւնքը հասնում էր 18,000 բուրլ տարեկան
եկամուտի, իսկ այժմ նոյն արդիւնքը հազիւ
հասնում է 8,000 բուրլ գումարի:»

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են, թէ քանի որ «Մշա-
կը» սկսել է նուիրեցնել պակասութիւնները
հարուածել, նրա համարները ձեռքից ձեռք պը-
տրովելով, կարգացվում են մինչև կատարելագէտ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՆՈՒՄԱԿԱՆ ԽՆԴՐԻ ԱՌԻԹՈՎ

«Մշակի» № 100-ում երևանի թղթակիցը հա-
տարակութեան և լրագրութեան ուշքը դարձրեց
մեծ կարևորութեան մի խնդրի վրա—դա երևանի
նահանգի կալուածական խնդիրն է, որ կառու-
վարչական չըջաններում հողի նկատ չէ դարձած
այժմ: Այդ խնդիրը կարևոր է, որովհետեւ նա
վերաբերում է մեր հիմնական ժողովրդական շա-
հերին, նրա անտեսական ու բարոյական իրա-
ւունքներին: Մի և նոյն ժամանակ ներկայ սե-
րունդին համար դա մի փորձաքար է. ինչպէս
ենք հասկանում պատմական արդարութիւնը և
ժողովրդայնութիւնը, որչափ զարգացել է հա-
տարակական մարտը խնդիրները:
Գծադրող բարձր թղթակիցը շատ քիչ նիւթ է
տալիս ընթերցողին, իսկ ուրիշ տեղեկութիւններ
շատ քիչ ունենք: Մինչև այժմ այդ խնդիրը գա-
ւառ կան թղթակցութեան նիւթ համարեա չէ
եղած շինական ժողովրդական խնդիր է յա-
րուցանվում և ամօթ մը—մենք բոլորովին ան-
ժանօթ ենք այդ խնդրի հետ և տկար ու ան-
պատրաստ ենք խելացի խորհուրդ տալու և ժո-
ղովրդի շահերին ծառայելու: Կը խնդրենք նը-
րանց, որոնք գիտեն, հարցրե՞նք մանրամասն տե-
ղեկութիւններ, ի՞նչ թէ նոր մի և նոյնն է, միայն
թէ կարողանային պարզել խնդիրը և նիւթ տա-
լին հաստատ եղրակացութիւնների համար:
Մեր ժողովրդի գիւղական համայնքին, թղթ-
ակցի ասելով, 1870 թականին մի մեծ հա-
րուած է տրուած: Մեր ժողովրդի թէ իրաւաբա-
նական և թէ անտեսական յարաբերութիւնները,
ի հարկէ, փոքր ի շատէ պէտք է փոփոխութեան
ենթարկվին: Բայց—ինչպէս և լինէր համայնքի

խնդիրը՝ դարձեալ անկարելի է այդպէս յանկար-
ծակի կտորել մի պատմական հիմնական հաստա-
տութիւն: Նա մանաւանդ, որ վիճաբանութիւնը
զեռ չէ վերջացած և կարծիքները բոլորովին
տարբեր են: Մի յօդուածում, որ ես տպել էի
«Մշակում» 1879 թ. (№ 59, 60, 61 Գիւղական
իրաւունք), ցոյց էի տուել, որ արևմտեան եւրօ-
պական հոր իրաւաբանները, ինչպէս Հենրի Մէ-
նը, Լավլէն, Նասեն և նամանաւանդ ռուս
գիտնականները, այժմ սաստիկ քննադատում են
նախկին իրաւաբաններին այն խնդիրներում, ո-
րոնք վերաբերում են կեանքի և հաստատութիւն-
ների ձեռնարկ: Նրանց կարծիքով համայնքը նոյն-
չափ յարգելի է (գուցէ և գերազանց է), որչափ
և մասնաւոր սեփականութեան սկիզբը: Այն ինչ
կորցնում է երեւմի մասնաւոր մի անդամ—երկ-
պատիկ ստանում է համայնքը և հաստատութիւ-
նը: Եթէ այժմեան համայնքը չէ համապատաս-
խանում մի քանի նոր պահանջներին, դա չէ նը-
շանակում, որ համայնքը անպիտան ու վնասա-
կար է, այլ այն, որ պէտք է համայնքը նրան յար-
մարեցնենք այդ նոր պահանջների համեմատ:

Թղթակցի ասելով իւրաքանչիւր գիւղացի այժմ
պէտք է յետ գնի իր կտոր հողը կալուածատե-
րից: Այդ մի և նոյն սկիզբն է գործածված և
ռուս գիւղերում: Սարկիներին ազատած օրից
մինչև այժմ գիւղացին վճարում է մաս-մաս իր
մշակած հողի գինը նրա տոկոսով և դեռ պէտք
է շարունակի մի 30 տարի էլ մերձաւորաբար
այդպէս հաստեցանելու: Ինչ գիւղացի մեծ փող
ունի՝ երբեմն միանգամից վճարում է իր առա-
ջուքը ու հողը իրան սեփականացնում: Այսպի-
սի գործողութեամբ հողը վերջնիւրջը դառնում
է առանձին գիւղացիների սեփականութիւնը:
Համայնական սկիզբը կորչում է. իսկ ընդհանուր
օգտվելու հողերը, օրինակ արօտներ, մարգա-
րաւորներ և անտառները կամ բաժանվում են
կամ մնում են իրեն հասարակական սեփականու-
թիւն: Տէրուական գիւղերը, որոնց կալուածա-

տէրը համարվում է տէրութիւնը, ի հարկէ, թե-
թե տուրք են տալիս, իսկ ինչ վերաբերում է
հողին, նա մնում է ընդհանուր գիւղական—հա-
մայնական: Եթէ այդտեղ եւ մտցնի հողի վա-
ճառումը, այն ժամանակ իւրաքանչիւր գիւղացի
կը ցանկանայ տէր լինել իր գնած հողին և մաս-
նաւոր սեփականութեան ոյժը կը հաստատվի:

Տէրութիւնը մինչև այժմ հաստատ և վճարու-
կան կերպով չէ յայտնել թէ արդեօք նա պաշտ-
պան է համայնքին թէ ոչ: Նա չը կամեցաւ միան-
գամից նրան փշացնել և մի քանի դէպքերում
նա հերքում է համայնքը: Բայց գործնականա-
պէս մտցնելով «Ուստապայեա գրամօտան», նա
կանգնեց կարծես մասնաւոր սեփականութեան
կողմը: Այժմ ես դեռ երեւում է մի անորոշու-
թիւն նոր կարգադրութիւնների և նախազինների
մէջ: Ինչ վերաբերում է ռուս հասարակութեան
և գրականութեան, նրանք վերջին 7—8 տարի-
ներս կարծես բոլորովին անցան համայնքի կողմը
և սրա պահպանելու համար՝ ընտանական խօ-
սակցութիւններում, ուսումնական ժողովներում,
զեմստովոյում, գրական ասպարիզում հազար ու
մի տեսակ նախազիններ են առաջարկվում, հա-
մայնքը պահպանելու խնդրում համաձայն են և
սրավանդութիւնները, և նարոնիները, և արմա-
տականները, և վերաբերելի մի մասը:

«Մշակի» թղթակցի ասելով, գիւղացիները
մշակում են հողը համայնքի իրաւունքով և երեք
տարին մի անգամ նոր բաժիններ էլն անում ի-
րան մէջ: Բայց 1870 թ.էլ—... իւրաքանչիւր ծո-
խին յատկացվեցաւ հողի մի յայտնի բաժին, որ
և պէտք է մշակել իւրաքանչիւրը առանց փոփո-
խելու: Չը գիտենք որչափ ճիշդ են թղթակցի
տեղեկութիւնները, բայց զարմանում ենք այդ-
պիսի կարգադրութեան վրա և ահա ինչու: Ռուս
գիւղերում եւ, ինչպէս ասացինք, գիւղացիները
գնում են իրանց հողը իր մասնաւոր սեփակա-
նութիւն առանձին անձնաւորութիւնների: Բայց
այնտեղ չէ արգելում գիւղացիներին միմեանց

մէջ զանազան փոփոխութիւններ և անցուղաւոր
կատարել: Ճշմարիտ է՝ կան գիւղեր (օրինակ
Կօլլչիւօ գիւղը Մօսկով նահանգի Կօլլչիւօ գաւա-
ռի), որոնք սկզբից արդէն վճեն են հողը
բաժանել ծուխերի և նրանց մասերը գնել իր
իւրաքանչիւրի ժառանգական սեփականութիւն:
Բայց այդպիսի կարգադրութիւնը կախուած էր
նոյն իսկ գիւղացիներից, նրանք կարող էին և
համաձայնվել և չը համաձայնվել: պէտք է ա-
ռել, որ այդպիսի գիւղերի թիւը շատ սակաւ է:
Բացի դա Կօլլչիւօ գիւղերի մէջ ուշք է դար-
ձած գլխաւորապէս ծուխի վրա: մինչդեռ Ռու-
սաստանի ներքին նահանգներում բոլոր գիւղե-
կան միջին հայիւները աչքի առաջ ունեն հար-
կատու անձը—հողին (գուշա ընդգլխայեա): Կա-
րևոր է գիտենալ, հողը փոփոխելու իրաւունքի
ոչնչացնելը ինչ ազդեցութիւն ունեցաւ մեր գիւ-
ղերի վրա: գիւղացիք բաւական են նրանից թէ
անբաւական: հեշտապարս դա մէկին իր գործերը
աւելի լաւ տանելու և ինչպէս ազդեց դա նոյն
իսկ բարոյական և կենցաղավարական հայեացք-
ների վրա:

Թղթակցի ասելով, «Կալուածատէրերը առա-
ջարկում են հետեակը: Իւրաքանչիւր կալուած-
քի երկու երրորդականը պատրաստ են առանց
փողի գիշանել գիւղացիներին և այդ հողը
կը դառնայ նրանց համայնքի սեփականու-
թիւն: իսկ կալուածքի մի երրորդականը թող
մնայ, որպէս կալուածատիրոջ սեփականութիւն:
Եւ այդ ձևով բաժանելը շատ հեշտ է անելու,
քանի որ Կրեմնեան նահանգի իւրաքանչիւր կա-
լուածը բաժանված է ախչա ասված 6 հաւա-
սար մասի վրա... Այդպիսով իւրաքանչիւր կա-
լուածք 6 ախչայից, կալուածատէրի առաջար-
կութեամբ, 2 ախչա պէտք է մնայ կալուածա-
տիրոջ, իսկ 4 գիւղացիներին: Այդպիսով ոչ յետ
գնելը կը հարկաւորվէր, ոչ էլ կալուածատէրերը
վտանգի մէջ կը լինէին ազգատանալու, ոչ էլ
գիւղացին հարկաւորութիւն կունենար իր անձ-

մաշվելը՝ Հազիւ հազ կարգաւ խմացողներն էլ սկսեցին «Մշակը» կարգաւ։

ՆՈՒՅՈՒՑ մեզ գրում են։ «Նոյնիս զաւառում մօտ 10,000 հայ մանկաներն են, որոնք միանգամայն հեռացած են հայութենից։ այժմ էլ խիստ արագ կերպով տարածվում է աւետարանականութիւնը այստեղի հայերի մէջ։ Այսպիսով լուսաւորական հայերի թիւը օրից օր պակասում է։ Ո՞ւր պարտքն է այդ մասին հրահրելու։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„НОВАЯ ГАЗЕТА“ ԼՐԱԳԻՒ ԹՕԴՈՒՍԻՐ

„Новая Газета“ լրագրի մէջ տպւած է հետեւեալ առաջնորդող յօդուածը։

Օգոստոսի 8-ին պէտք է շարունակվեր յունական զօրքերից Թէսալիայի այն մասերի դրաւելը, որոնց Բ. Գուռը զիջել է Զունաստանին։ Յոյները պէտք է առաջանային հինգ զօրաբաժիններով և, ի նկատի առնելով այն հանգամանքը, որ առաջ յոյները իրանց զիջած երկրի մի մասը դրաւելին առանց ընդդիմադրութեան, կարելի է ենթադրել, որ այս անգամ էլ զօրքը կը վերջնապէս աջողութեամբ և այն պարտաւորութիւններին համաձայն, որոնց թիւրքաց կառավարութիւնը իր վրա է առել։

Այնքան է, որ Բ. Գուռը մտադիր չէ ուշացնել յունական խնդրի լուծումը և յոյս չունի պահպանել իր համար զիջած երկրները մի մասը։ Զիջած երկրների մի մասը Զունաստանին յանձնելը յետաձգվեցաւ այն պատճառով, որ այդտեղ հարկաւոր էր մի քանի վարչական միջոցներ գործ դնել մահմետական ազգաբնակչութեան փանաթիկոսութիւնը զսպելու համար։

Ձէ կարելի այդ բանի համար Բ. Գուռից առանձնապէս շնորհակալ լինել։ Նա հարկաւոր է համարում հպատակվել անհրաժեշտութեանը։ Որ թիւրքի անուղղելի է,

այդ կարելի է շուտով նորից տեսնել։ Հաստատարելով ստացված տեղեկութիւնները երևում է, որ Զունաստանին զիջած երկրները յանձնելուց յետոյ, Անգլիան միտադիր է դիպլոմատիական ճանապարհով բարձրացնել Բերլինի դաշնագրի 61 յօդուածի չորսագործելու հարցը, որ վերաբերում է Հայաստանի մէջ մոցնիկ վերանորոգութիւններին։ Այդ յօդուածը, ինչպէս յայտնի է, պարտաւորեցնում է թիւրքաց կառավարութեանը «նայապաղ իրագործել բաւարարութեանը և վերանորոգութիւններ տեղական պահանջների համեմատ հայերով բնակեցրած նահանգների մէջ»։ Բ. Գուռը պարտաւոր է պարբերաբար հաղորդել պետութիւններին տեղեկութիւններ այն միջոցների մասին, որոնք գործ կը դնվեն հայերով բնակեցրած նահանգների մէջ, որովհետեւ պետութիւնները պէտք է հսկեն այդ միջոցների գործադրութեան վրա։

Այն ժամանակից ինչ Բ. Գուռը իր վրա է առել այդ պարտականութիւնը երեք տարուց աւելի է անցել, մինչդեռ Հայաստանի համար ոչինչ չէ արված, ոչ մի բարենորոգում կամ վերանորոգութիւն չէ մտցրած։ Նրանց կողմից պետութիւնները համբերում էին այդպիսի յապաղումին, ի նկատի առնելով այն դժուարութիւնները, որոնց հանդիպում էր Բ. Գուռը, կատարելով Բերլինի դաշնագրի պահանջները եւրօպական թիւրքիայի վերաբերեալ։ Այժմ այդ դժուարութիւնները վերջանում են և հայկական խնդիրը ինքն ըստ ինքեան հերթական է դառնում։ Որ միայն Անգլիան պատրաստվում է բարձրացնել այդ խնդիրը և ոչ թէ մի այլ պետութիւն, այդ հանգամանքը նրանով է մեկնվում, որ Գլադստօն վճռել է վերջացնել արեւելեան հարցը գոնեա Բերլինի դաշնագրի համեմատ։

Ի զուր կը լինէր սպասել, որ Թիւրքիան կը շտապի անյապաղ և առանց ընդդիմադրութեան կատարել Անգլիայի բոլոր պա-

հանջները Հայաստանի վերաբերութեամբ։ Հայոց հարցի լուծման ժամանակ կը կրկնվեն նոյն անցքերը, որոնք տեղի ունեցան յունական և չերնօգորիական խնդիրները վճռելու ժամանակ։

Անգլիական կառավարութեան այդ քայլը առիթ կը տայ դիպլոմատիական նոր բանակցութիւնների սկսվելուն, նոր վիճարանութիւններին, պետութիւնների միաձայն ձնչմանը Բ. Գրան վրա և այլն։ Զանազանութիւնը միայն նրանում է, որ ներկայումս պետութիւնների փոխադարձ յարաբերութիւնները աւելի վատ են, քանի թէ անցեալ աշնանը «Յօվային ցոյցի» ժամանակ և որ Գլադստօն ստիպված կը լինի միայնակ գործել, չը յուսալով որ և է օգնութեան վրա։

ՖԻՆԱՆՍԱ

Բերլինի „National Zeitung“ լրագիրը հաղորդում է հետեւեալը հեռագրական այն հաղորդութեան մասին, որ Գամբետտա չը կարողացաւ մի ծառ արտասանել իր ընտրողների առաջ։ Այն դահլիճը, որտեղ պէտք է հաւաքվէին ընտրողները, փարիզցիների համար շատ հեռու էր, որովհետեւ ամրոցներից դուրսն է գտնվում։ Այն ծածկօցը, որտեղ «քաղաքացի» Գամբետտա պէտք է փայլէր իր հարաւային պերճախօսութեամբ, կրում է 49 փողոցային համար։ Այդ ծածկօցի երկարութիւնը 66 մետր է, իսկ լայնութիւնը 20 մետր և այնտեղ սովորաբար շինութեան փայտ էր պահվում։ Այդ տարածութեան մէջ տեղը օգոստոսի 16-ի համար մի բարձրութիւն էր շինված, որի վրա պէտք է տեղ բռնէին ընտրողական մասնաժողովի անդամները։ Այդ բարձրութեան մօտ մի հասարակ փայտէ սեղան էր դրված, որի մօտ պէտք է տեղ բռնէին լրագիրների աշխատակիցները և հետեւէին վիճարկութիւններին։ Ժողովին մասնակցողների համար ոչ աթոռներ և ոչ նստարաններ կային։ Ժողովատեղին պէտք է լուսաւորվէր երեքտասան ութ արեւներով, այնպէս որ լուսաւորութեան պակասութեան մասին ոչինչ չէ

կարելի ասել։ Օգոստոսի 16-ի անկարգութիւնների պատճառները աւելի դրական են, քան թէ թոյլ լուսաւորութիւնը։ Բացի այդ, աղմուկ գցող յայտնի մարդկերանց թոյլ չէր տրված ժողովին ներկայ գտնվել և հրաւիրատուները զգուշութեամբ էին բաժանվում։ Բայց կղերականների և արամատականների աշխատանքները Գամբետտայի դէմ խոր արմատներ էին գցել, այնպէս որ մասնաժողովի անդամները շատ անգամ սխալվում էին իրանց կողմնակիցներին ընտրելու ժամանակ, մանաւանդ որ արմատականները ժողովին ներկայ գտնվելու համար ամեն տեսակ միջոցների գործադրութիւնը ներքի էին համարում։ Գամբետտայի հաւանորդները ամբողջ փարիզի մէջ առաջուց պայմանաւորվել էին հաւաքվել Բեկվիլի մէջ ժողովատեղիին առաջ։ Այդ քաղաքաբաժնի առեւտրականները անհագնացած էին և մասամբ փախել էին իրանց խանութները։ Պոլիցիան նախազգուշացնող միջոցներ էր գործ դրել և բացի այդ զօրքեր էին կանչված։

Այդ ժողովին ներկայ էին մօտ 10,000 մարդիկ։ Ժողովի բացման ժամանակ աղմուկի աղաղակներ սկսվեցան, որոնց պատճառով անկարելի եղաւ կազմել ընտրողական բիւրօներ։ Գամբետտա փորձեց խօսել, բայց նրա ձայնը չէր լսվում։ Գրանից յետոյ նա, իր փայտը սեղանին խփելով, դիմեց հանգըստութիւնը խանդաղողներին, բայց նրա խօսքերը միայն նրանք լսեցին, որոնք ամենքից առաջ էին կանգնած։ «Գուռ 10,000 հոգի էք և անգոր էք դարձել մի խումբ կատաղածների շնորհիւ, որոնց ես ճանաչում եմ Բացի այդ այստեղ այնպիսի անամօթներ կան, որոնց վճարված է վիճաբանութիւնները խանդաղողները համար, որովհետեւ նրանց պատասխանել չեն կարող։ Ես ձեզ սպասում եմ օգոստոսի 21-ին»։ Փասն րօպէ տեղը ընդդիմադրութեանց յետոյ Գամբետտա ստիպված էր հեռանալ և ժողովը փակվեցաւ ժամի 9-ին։ Գամբետտայի ներկայանալը ժողովին սկզբից միաձայն ծափահարութիւններով ընդունվեցաւ և բիւրօն կանոնաւորապէս կազմակերպեցաւ։ Միայն վերջը երեք կամ չորս մարդ աղմուկից երեք և դա դարձաւ անկարգութիւնների պատճառ։ Դահլիճի միայն մի մասն էր լաւ լուսաւորված, այնպէս որ խաւարն էլ նպաստում էր անկարգութիւններին։

Նական հոգն ունենալու համար դիմել փոխառնութեանը ահապին տոկոսներով, որ նրան անպատճառ կը քանդէր...

Այս խօսքերից առաջին անգամը այնպէս է երևում, իբր թէ գիւղացուն արած դիմագրութիւնը—չափ մեծ արդարութիւն է և բարեբարութիւն։ Բայց պէտք է աչքի առնել գիւղացու աշխատանքի դրութիւնը և հողի կարևորութեան չափը նրա համար։ Ինչպէս կարելի է խօսել մի երրորդականի զիջողութեան վրա, երբ մեզ հասկնալովութիւն չեն տալիս թէ՛ արդեօք առանց այդ երրորդականի կարող կը լինեն ապրել մեր գիւղացիները։ Գրաւվել ձրի հող տալովը՝ անկարելի է, քանի որ այդ ընծայով գիւղացին պէտք է մշտնջանական մշակ դառնայ կալուածատիրոջ համար։ Նա իր ձեռքի աշխատանքով իսկապէս մի անվերջանալի տարեկան տոկոս պէտք է վճարի ընծայի համար։ Եւ վերջապէս պէտք է փութը լինէր մտածել նոյն իսկ մի երրորդականի վրա, դա միթէ փութը հող է, եթէ ամբողջ համայնական հողը ասենք 3000 դեսիատին է, դրանից է 1000-ը գնում է կալուածատիրոջ, իսկ հարկաւոր ընտանիքներին միայն 2000 դեսիատին։ Մեր օրինակը մեծերիցը չէ, ինչքան կը լինէր կալուածատիրոջ մասը, եթէ հողի մեծութիւնը լինէր 6000, 10,000 և աւելի զեսիատին, Հէնց այն բանի վրա մտածենք, որ կալուածատիրոջ համար օգտաւէտ է ձրի հող տալը։ Դա ինչ է նշանակում.—այն է նշանակում, որ նա մէջ տեղ համարեա բան չէ կորցնում, իսկ գիւղացիները նրանից կախված են մնում կատարելապէս։ Եթէ ընթերցողը փութը ի շատէ հետաքրքրվէր ուստ գիւղական կալուածական խնդրով, նա ի հարկէ կը յիշէ ձրի հողաբաժինը—даровой надѣль—տալած բանը։ Դա մի և նոյնն է, ինչ որ առաջարկում են այժմ երևանի կալուածատերերը։ Ձրի հող տվողները իրանց ընծայ գիւղացիների քիովը զուրս բերին և այժմ տերութիւնը տեսնելով հարկը 20 տա-

լուց յետոյ ստիպված է նոր ի նորոյ օգնել խեղճ գիւղացիներին, որոնք սկզբից գրաւվել էին ձրի հող ստանալուց, նորից յետ քնել տալ հողը։ Ուստ ժողովրդի բաղից այդպիսի տեղեր շատ չը կան։ Գիւղացիները իրանց հողով բաւակաւանալ չեն կարող. ստիպված են աշխատելու ուրիշ համար. իսկ սա որչափ կարելի է՝ նրանց քանում է։ Երբ որ գիւղացին այդպիսի առածադական յարաբերութիւններ ունի կալուածատիրոջ հետ, երբ որ նա կախված է մարդկային կամակորութիւնից, նրա մարդասիրութիւնից, այն ժամանակ նա երբեք դարգանալ չէ կարող ոչ նիւթապէս, ոչ բարդապէս։ Ազատ գիւղացին միայն կարող է հաստատ զարգացման վրա մտածել և ազատ գիւղացի ունեցած ժամանակ կարող է միայն թէ երիտասարդութիւնը, թէ ինտելիգենցիան, թէ գրականութիւնը առանց խղճմանքը տանջվելու գործել իր երկրի համար։

Այսպիսի խնդիրներ վճռելու ժամանակ պէտք է թողնել մի երկու մարդու անձնական հաշիւները և մտածել ընդհանուր բարօրութեան վրա։ Գիւղացուն պէտք է այնպէս օգնել, ինչպէս նա է ցանկանում։ Գիւղացու մասին հողացած ժամանակ բաւական չէ լսել միայն կալուածատերի պատգամաւորութիւնը.—այլ պէտք է խոր ծանօթանալ գիւղական արամագրութեան հետ կամ առաջ բերել մի գիւղական ներկայացուցչութիւն, մի գիւղական պատգամաւորութիւն։ Պէտք է քննել և շուտով ժողովել նիւթ գիւղական այժման երկրագործութեան վրա։ Ինչպէս են այժմ մեր գիւղացիք օգտվում իրանց հողից, որչափ են հերկում, որչափ տուրք են հատուցանում տերութեան, կալուածատիրոջ և այլն։ Ո՞րչափ հող ունեն իրանց ձեռքին և եղածը բաւականա՞ծ է դեռ պակասում է.—ինչպէս կը ցանկանան յին իրանց գիւղացիները հողերը կարգադրել։

Գիւղացիների խօսքերը միայն կարող են մեզ

համոզել թէ կարելի է մի երրորդականը խել նրանցից թէ ոչ։ Նոյնպէս գիւղացիները կարող են մեզ արդար կերպով ասել. արդեօք ձեռարկել է թէ բոլոր ախլաները հաւասար են միմեանց թէ քանակութեամբ, թէ որակութեամբ։ Իսկ եթէ պատահի, որ 6 ախլաններից կալուածատէրը վեր առնի այն 2-ը, որոնք ամենալաւերն են և որոնց միջով հոտում է ոռոգանալու ջուրը, այն ժամանակ գիւղացին մի և նոյնն է թէ գրկվից հողի կէտից, դուցէ և բոլորից։ Գոնէ այդ բանը պատահել է յաճախակի ուստ գիւղերի և կալուածատերերի հետ։ Վերջիններս ստացել են լաւ և պողաբեր հողերը, իսկ գիւղացուն տուել են անպիտանը։ Կալուածատերերին լսես միայն կարող ես, ո՞վ դիմէ, ինչ չարիքներ առաջ բերել։ Նրանք դուցէ հաւատացնեն, որ դեռ հողի կէտն էլ բաւական է և այդպէս արել են 20 տարի առաջ ուստ սեւահող նահանգների կալուածատերերը, որոնք տերութեան ցոյց էին տալիս, որ գիւղացուն բաւական է նրա մշակած հողի կէտն անգամ։

Եթէ տերութիւնը վճռել է անպատճառ յետ դնել տալ հողը՝ պէտք է նայենք նրա արդարացի պահանջները։ Քննադատելուց առաջ լաւ չափեք ու կշռեք ամբողջ վերանորոգութեան ներքին ոգին։ Ի հարկէ հարուստ և ազատ գիւղացին կաւազնի հարկատուութեան ամբողջ ամփոփը, բայց ժողովուրդը մի և նոյն ժամանակը տէր կը դառնայ իր աշխատանքին, իր ժամանակի այս ու այն կերպ գործածութեան։ Զեռ գնել հողը հնչել է և լաւ կը լինէր, եթէ հողը անցնէր գիւղական համայնքի ձեռքը նրա ներքին ազատ կամքին թողնելով շարունակելու համայնական կեանքը։ Իսկ կալուածատիրոջ վարձատրութիւնը պէտք է ընկնէր գիւղացու վրա թոյլ կերպով, ստեղծելով փոխառնութեան նման մի բան, որ ծածկէր այդ գումարը տարիներից յետոյ ընդհանուր գործակցութեամբ։ Զաւում ենք դարձաւ, որ նիւթ չունենք մեր

առաջ՝ փութը ի շատէ հաստատ դատողութեան համար։ Գուցէ նիւթերը շատ հեշտ պարզէին մի քանի տարակուսանքներ։ Թղթակիցը օրինակ հակվում է մի երրորդականը խելու կողմը և դա համարում է խելացի ու արդար մի բան։ Գուցէ նա կարողանալ աւելի մանրամասնօրէն ապացուցանել իր ասածը և մենք ուրախ կը լինենք կարողաւ նրա յօդուածի շարունակութիւնը։ Ամբողջ յօդուածի ոգին գոնէ այդ է ուղղում աւել և մեզ համար բաւականին դժուար էր կասկածները այնպէս պարզ յայտնել նիւթերի պատգամութեան պատճառաւ։ շատ-շատ միայն են թաղիկ կարող ենք.— Յայտնում ենք թղթակցին նրա հետաքրքրական և իսկ կարեւորութիւն ունեցող յօդուածի առիթով մեր խորին շնորհակալութիւնը։ Եւ թէ նրան և թէ միւսներին, որոնք կարող են մի նոր բան ասել—խնդրում ենք շտապել անել—հաղորդել մանրամասնութիւններ մեր լրագիրներին— ի սէր ժողովրդական բարօրութեան, ի սէր աղալային հաստատ զարգացման։

Գուցէ սխալվում ենք. բայց մեզ այնպէս թուեց, որ թղթակցից գիւղացու մասին աւելի քիչ է հոգում։ Կը խնդրէինք անց կողմէ նայել աւելի լայն կերպով։ Գործը մեծ և կարեւոր գործ է, իսկ արած սխալ—տանանակ և հարկաւոր տարիներով թշուառութեան և չարիքների պատճառ կը դառնայ։

Խեղճ հայ գիւղացի՝ Գարեթով տանջանքներ տեսնար. քո հողը քեզից խելցին ուրիշները— տէր դարձան նրան և երբ դու յոյս ես կապում թէ ապագադ ապահովուած է, չունես ոչ ոք քեզ պաշտպան։ Քո տէրը կարողութիւն ունի իր օգտի համար պատգամաւորութեան ուղարկել, իսկ դու հայրենիքի սին, ապագայի ապաւէնդ, մնացած ես անպաշտպան։

Մօսկվա

Ա. Գալանիսար

ԳԱՄԲԵՏՍԱՅԻ ՃԱՌԸ

Բեկլիլի շրջանի ընտրողների առաջ Գամբեթսայի ընտրատարածանց հետևեալ ծառը: «Զինգերորդ անգամ ես դիմում եմ Բեկլիլի ընտրողներին, որոնք ինձ մտցրին քաղաքական կեանքի մէջ: Բեկլիլի իմ ժողովրդական ազդեցութեան օրօրոց եմ համարում և այդ պատճառով նա ինձ համար չափազանց թանկ է: Ինձ հրաւիրում էին կանգնեալ լինել միւս շրջանների մէջ, բայց ես հրաժարվեցի այդ հրաւերներից, որպէս զի վերջ դնեմ տարածված լուրերին, իբր թէ ես կամեալ եմ առաջարկել իմ գիտատուրայ: Այդ միտքը ոչ թէ միայն յանցաւոր, այլ և ծիծաղելի կը լինէր: Ես վճռել եմ Բեկլիլի երկու շրջանների մէջ կանգնեալ լինել, որպէս զի ընդունեմ յանդիմանութիւններ, եթէ իմ ընտրողները կամենան ինձ յանդիմանել որ և է գործի համար: Ես բաց խաղ եմ խաղում, բայց ես գիտեմ, որ չափազանց շատ բարեկամներ ունեմ և ուշադրութիւն չեմ դարձնում իմ թշնամիներին վրա: Ես ձեզ շատ չեմ գրաւեցնի այն զրպարտութիւններով, որ ինձ վրա թափում են կղերականները և նրանց դաշնակից անհաշաները: Նրանք ինձ դիտարարում են անուանում, ինչպէս և այն ժամանակ, երբ ես աշխատում էի կազմակերպել ժողովրդական պաշտպանութեան կառավարութիւնը և վերականգնել ոտնակոխ արած ազգային պատեր: Ես արհամարհում եմ այդ մեղադրանքները և ուրիշ բանի եմ անցնում: Գրական մարդկերանց հետ պէտք է դրական գործերի մասին խօսել: Անձնական իշխանութիւնը ոչ ոքի համար այնքան ատելի չէ, որքան ինձ համար: Ես մաքառում եմ նրա դէմ 1869 թուականին, երբ դիտարարեան կայանութեան ձև ունէր, մաքառում եմ մայիսի 16-ին, երբ նա «բարոյական կարգապահութիւն» էր անուանվում: Ես գիտեմ, որ ինձ վրա այնքան չեն յարձակվում, որքան իմ քաղաքականութեան վրա, որ պատահարների համար ոչինչ չէ գոհում, որ հիմնված է խելացի քաղաքականութեան վրա և մինչև անգամ կարելի է ասել աջողութեան քաղաքականութեան վրա: Մտնելով քաղաքական կեանքի ասպարէզը, ես զբաղվեցայ մեր կուսակցութեան պատմութեամբ, ինքս ինձ խօսք տալով իմանալ, թէ ինչից է, որ նրա աջողութիւններից յետոյ, միշտ անկումն է լինում: Ես համոզվեցայ, որ դրա պատճառը այն է, որ մարդիկ շատ են զբաղվում երեւակայականով և իրանց օգտին են գործ դնում այն երկիւղը, որին հեշտութեամբ ենթարկվում են Վրանսիացիները, վախենալով նոր յեղափոխութիւններից: Այդ բանի մէջ համոզվելուց յետոյ, ես ինքս ինձ ասացի, առաջնորդել ժողովրդին դէպի փաստերի ուսումնասիրութիւնը, ոչնչացնել նրա երկիւղը, միջնորդել ժողովրդին և բուրժուականի մէջ, որպէս զի կարողանաս կարգապահութիւնը հաստատ հիմքերի վրա դնել: Այդ ամենանոր դրական քաղաքականութեան շնորհիւ, բուրժուական փոքր առփոքր հրաժարվում է իր հին նախապաշարմունքներից և պատգամաւորների վերջին ժողովի մէջ լսելիցաւ հասարակական նոր դասակարգելի ձայնը և այդ դասակարգելի իրաւունքը ձեռքը կառնեն կառավարութիւնը, չը նայելով յաղթված կուսակցութեան անբաւականութեանը: Ահա սա է Վրանսիական իսկական քաղաքականութիւնը, որ ամենքին թոյլ է տալիս մասնակցել կառավարութեանը: Նա միջոց առնելով Վրանսիական վերանորոգելի և վերականգնելի իր պա-

տերազմական փառքը, որ Սեդանի և Մեցի մօտ ոտնակոխ արվեցաւ յանցաւոր կառավարութիւնից: Գամբեթսայի պատգամաւորների վերջին ժողովի գործունէութիւնը և, խօսելով մայիսի 16-ի կառավարութեան մասին, նա ասաց. «Վարդավաճ երկիրը մի հարաւածով յետ մղեց իրանից մարշալի (Մակ-Մահոնի) յետադիմական կառավարչական եղանակը և բարոյական կարգապահութեան» բոլոր կողմնակիցներին և յանձնեց իր վիճակը մաքուր և ազնիւ ձեռքերին: «Գաղաքական կենտրոնականութիւնը պէտք է պահպանվի, ասաց նա: Ֆրանսիան միշտ մի է եղել: Անհրաժեշտ է ժողովրդին կատարեալ ազատութիւն տալ, բայց պետութիւնը այս կամ այն համայնքին յանձնելը, կը նշանակի միւս միւս անկողնակցութիւնը: Ընկերութիւնների ազատութիւնը պէտք է կատարեալ լինի: Նա կայանում է աշխատանքի, քաղաքականութեան և սօցիալական անտեսութեան ազատութեան մէջ: Բայց ես ընկերութիւնների կատարեալ ազատութիւն եմ ցանկանում ամենքի համար և ոչ թէ միայն վարդապետների համար:» Արտաքին քաղաքականութեան մասին Գամբեթսայ ասաց, թէ ցանկանում է, որ Ֆրանսիան լինի ամուր, պահպանի իր արժանաւորութիւնը, անկախութիւնը և ազնւութիւնը, որ նրա յարաբերութիւնները բոլոր պետութիւնների հետ բարեկամական լինեն և որ իր յարաբերութիւնների ժամանակ պետութիւնների հետ նա կարողանայ գտնել այն կէտերը, որոնց մօտ կենտրոնանում են ընդհանուր եւրոպական շահերը: «Տեսնելով, թէ ինչպէս Ֆրանսիայի մէջ աջողութիւն են կարգապահութիւնը, ազատութիւնը և աշխատանքը, ես սկսում եմ մտածել, որ կը գայ այն օրը, որ հերթեալ կան հարցերը փլիւսօփայական մտածողութեան օգնութեամբ կը լուծվեն: Այժմ բացի սրից շատ միջոցներ կան միջազգային հարցերը լուծելու համար: Ես ցանկանում եմ և յոյս ունեմ, որ մի օր մեզանից հեռացած կողմերը դարձնաւ մեզ հետ կը միանան միմիայն իրաւունքի և մարդասիրութեան օգնութեամբ:» Այդ խօսքերը արտասանելուց յետոյ ներկայ եղողները կանչեցին. «Ինչո՞ք Գամբեթսայ, որ նկատեց. «այդ մի կանչէ՞ք, եթէ ոչ կասեն, որ դա էլ գիտատուրա է:» Գամբեթսայի ծառը անդադար ընդհատվում էր ծափահարութիւններով:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻՔԻԱՅԻՑ

Կ. Պոլսի, 9 օգոստոսի
Ազգային լիւր լինի «Մշակին», որ իր երկու թղթակցութիւններով Կ. Պոլսից մի առաջնորդող յօդուածով (№ 124) այստեղի է ֆէնդիկների վրա, միջոց առնալ մի երկու հայ լրագրողներին առ թիւը 30 լրաւ վատանկելու: Կ. Պոլսի եօթը հայ լրագրողները «Մշակին» համարները ստացածին հենց միւս օրը, շահաւէտ միջոց գտնելով «Մշակին» մէջ յիշված զրպարտեալ վսեմաշուքներից փող պոկելու, իսկոյն արտասպանելով «Մշակին» Եւրոպական յարձակմունքները, «Կուրծքը չբանջանալով լիւր թիւը բարձրաստիճան արժ անալիս ալիք ալիք անալիս իրան և կուտեցին նոցա առաջ յորակի ուղեք խոռնկ և զմարտի ինչպէս տեսնում էք Կ. Պոլսի խմբագիրները մարդու արժանիքը նորա կուրծքը ծածկող շքանշաններով են անալիս: Այդ անտեսելի լուրերի տարածվելը: Մէկ էլ կը տեսնեն միւս օր նոյն մարդը նոյն լրագրի միջոցաւ սկսեց այնպիսի լեզու գործածել հայրենասէր, «մեծաշարժաւ», «վսեմաշուք» և «ազնիւ» ֆէնդիկի վերաբերմամբ, որ կարծես էլ այս հասարակութեան մէջ միակ անարատ և արժանաւոր մարդ լինի: Նա ի հարկէ այս ընթացքը կը շարունակի մինչև այն ժամանակ, երբ հերթով անմաքէր լրաներ կըլկելով, կարգը կը գայ գարձաւոր նոյն ֆէնդիկին:

տակ ազգերից աւելի հլու և աւելի հաւատարիմ է ծառայում, ուրեմն ինչպէս համաձայնեցնել «արժանեաց» և հայրենասիրութեան» գաղափարը այն մարդկերանց համար, որոնք միայն հաւատարիմ գործիք են իրանց եղբայրների կործանման, այլ ոչ նոցա դարեւոր հաւատարմութիւնը վարձատրելու: Եկէք ու զլուխ հանեցէք... Բայց չը կարծէք թէ այնպիսի լեզու բանացնելով աշխարհի լրագրողական տները չը գիտեն իրանց արտի մէջ իրանց կեղծադրութիւնը, ոչ, սոքա այնպիսի խորամանկ են, որ այդ ամենը չանտ լաւ գիտեն, սակայն «արժանալից վսեմաշուքներից» ստանալու բաքչիչների զինը նոքա աւելի են լաւ գիտեն: Իսկ թէ ինչպիսի մարդիկ են այստեղի իտալիկացիների առաջնորդ «խմբագիրները» անհերկու խօսք, այստեղ կան երկու—երեք լրագրողներ, որոնք հոռւ են ոչ լուր բաղարտուն և ոչ ապարան, այլ լրագրողները կը բաղարտուն և ոչ ապարանի մէջ ձրի, խաթրի համար, հազար ստոր աղաչանքներով, վաղը այն ապարանում: Այս դեռ ամենը չէ, այլ այս «խմբագիր» վոլյանդներից շատերը իրանց անունն անգամ չը գիտեն ուղիղ ստորագրել, վստաւոր շահվում են մի քանի դուռով այն բաղարտուն տիրացու—բաղարտունից, որոնք սոված չըլնելով Կ. Պոլսի մէջ «չիյս»: «Չիյս» են աղաղակում Հայաստանի մշակ ժողովրդի համար և ամեն տեսակ գործնական առաջարկութիւններին էլ հաւատալ խօսում: Բայց ստանալով տեղութիւնից լրագրող ունեւալու արտօնութիւնը, այդ «խմբագիրները» կը սկսեն շահագործել իրանց իրաւունքը, ինչպէս մի վաճառելի առեւտրական ապրանք, որը չըլնելով փողոցներից փողոց, նոքա կը հանդիպեն այն տուն, այն տուն, ընտրելով տուրա համար այնպիսի բաղարտուն, երբ ցանկ աւելի բացակայ են: Մի քանի դուռը դնելով լաւքի կամ աղախնի ձեռքը (ինչպէս որ այդպիսի բաքչիչներ մի ընդհանրացած բան է այստեղ) մեր «մեծապատիւ խմբագիրները» զանազան պանտոմիմներով, աչքի ու յոնքի շարժումներով կիմանան այդ կաշառված սպասաւորներից թէ որ օրը ինչ ընտանեկան վատաստմանիչ տեսարաններ և ինտրիգներ են տեղի ունեցել է-հենց իր և իւր ու մի մէջ: Իմանալով ինչ հարկաւոր է, մեր «մեծապատիւ» շահագործող—մուրացիներ իսկոյն կը վաղէ իր վարձած տիրացու—զրազէի մօտ և կը հաղորդէ նորան օրուայ մէջ ժողոված իր «կենսական խնդիրներին» վերաբերեալ բոլոր «կարեւոր» կէտերը: Մէկ էլ տեսաւ միւս օր այս ինչ լրագրի մէջ երևաց, զրեթէ միշտ երկու անուանի այս կողմից լրագրողների մէջ Մամուլի և Թերշի մենի լիճք եւ արի, մի ամենապիքանտ կերպով յայտնած, բայց քստմնելի անխորհրդիւն «մի եւրոպական թղթում (Պերայում) ընկնելով փոքրահասակ, այսպիսի տարուց, այս ինչ զծագրութիւններով բարձրատիճան» մարդու ընտանեկան անուանարկիչ սովորութեանց և պահանջների: Երբ լրագրի մէջ կասվի թէ «բարոյական, ազգային, մարդկային» և չը գիտեն ինչ ինչ տեսակետով «մեծ» բողոքում ենք այս «պոքալի երեւոյթի» դէմ, աւելացնելով սորա վրա անուշաւ հետեւալ թէական խօսքերը՝ «Եթէ միայն մեր լսածները ձիւտ են...» ցնդելով անհայտ վերջի, գիտեմք գրած, բառերի վրա «խմբագիրներ» մի երկու օրից յետոյ (երբ արդէն լուրը հասած կը լինի ում հարկն է) կերթայ իր անկախութեանց նշանակէտ ընտրած էֆէնդիկ մօտ և ամենախորհուրդարար իր «խորին ցեւակցութիւնը» կը յայտնէ տարածված լուրերի մաքուր ընտանեկան պատաւոր անձը իրան բոլորովին կորցրած իր վրա արած սոսկալի հրապարակական անխորհրդիւնից, ստիպված կը լինի ի հարկէ ուրիշ ձար չը գտնել խաչառակութեան վերջ տալու համար, բացի միայն մի քանի լրա դնելուց իր գլխին պատուաւ «մեծապատիւ» մուրացիների ձեռքին, որ նա աշխատէ խափանել այդ անտեսելի լուրերի տարածվելը: Մէկ էլ կը տեսնեն միւս օր նոյն մարդը նոյն լրագրի միջոցաւ սկսեց այնպիսի լեզու գործածել հայրենասէր, «մեծաշարժաւ», «վսեմաշուք» և «ազնիւ» ֆէնդիկի վերաբերմամբ, որ կարծես էլ այս հասարակութեան մէջ միակ անարատ և արժանաւոր մարդ լինի: Նա ի հարկէ այս ընթացքը կը շարունակի մինչև այն ժամանակ, երբ հերթով անմաքէր լրաներ կըլկելով, կարգը կը գայ գարձաւոր նոյն ֆէնդիկին:

Ահա ձեզ թէ ինչ ասել է Կ. Պոլսի մէջ հայ խմբագիր և ինտելլիգենցիա. ի հարկէ այնպիսի տիրու և ողորմելի արարածների հետ միասին կրում են խմբագրի անունը և այնպիսիները, որոնք ամբողջ քսան տարի հասարակաց օգտին հազարներ թափելով, այս օր մնացել են խեղճ և ամենքից մոռացված... Այսպիսի «մեծապատիւ» մուրացիկան խմբագիրներն են, որոնք այս քանի օրերս այսպիսի աղմուկ բարձրացրին Մշակի «անխորհուրդ» թէյերի և էֆէնդիկների վրա: Թէպէտ ամբողջ Կ. Պոլսի գիտէ թէ ինչ ասել է աստեղ հայ խմբագիր, այն էլ Մամուլի և Թերշի մենի, բայց այսպէս թէ այնպէս, աղմուկը մնում է աղմուկ: Քիչ հետաքրքրութիւն չի լինի, կարծես, եթէ մէջ բերեմ այս տեղ մի շատ տարբերակ և մի և նոյն ժամանակ յատկորոշ (характерный) իրողութիւն, որից կարող էք աւելի պարզ գաղափար կազմել Կ. Պոլսի հայ խմբագիրներից շատերի ունեցած վարկի վրա: Մամուլի խմբագիրը օրինակ, որի ազգանունը, ասում են, Համբարձումեան է, իր ամենօրեայ վարդը արհեստի համաձայն հրապարակապէս ասում է և նաև գրվում Այվազ: Ահա այս կարգի «խմբագիրներից» մէկն է Թերշի մենի, որը այս օրերս հրաւիրված է «Արարատ» ամսագրի խմբագրութիւնը ձեռք առնելու: Մի հետաքրքիր բան եւս. շնորհիւ Մամուլի և Թերշի մենի յարուցած աղմուկի Մշակի մասին, արժանաւատ տեղից լսեցի, որ «վսեմաշուքներից» միւրը, որը իր ամբողջ կեանքի մէջ հայ լրագրի երես անգամ չէ տեսել, այս անգամ ստիպված է եղել ոչ միայն գտնել տալ Մշակ և կարգաւ, այլ իր կարիքի համար մի շատ նըպաստաւոր առիթ է ձանկել ցոյց տալ այդ համար ում հարկն է, որ հաւատացնէ նորան դուրսը: Երբ ինչ ինչը տեսել է մտկոյնների համար (այսինքն ուսանալիքի), ուրեմն և հաւատարիմ» նորին բարձրութեան: Ի հարկէ Մշակի շնորհիւ իր մեծից «աֆերիստ» ստանալը, հայ «վսեմաշուք» համար տալը հազար բոլոր կարծէ (նորինքն և կը բերէ), վստաւոր լրագրողայ չը կայ, որ Սոսիւնը այդ «մեծ» հայրենասէր վսեմաշուքը, սրտի մէջ շատ երախտագէտ պիտի գտնվի: Մշակին, վստաւոր և նա առաջինը պիտի լինի ցանկացող Մշակի որչափ կարելի է շատ տարածման Կ. Պոլսի մէջ, որ գուցէ միւս անգամ էլ փոխանակ «աֆերիստ» մի ականակաւ չքանչաւն ոտանայ իր «անկասկածելի» հաւատարմութեան համար: Ահա այն մարդիկը, որոնք Սոսիւնի նման ստրկական իրգեալն են կաղմում... Ամբողջ վեց ամիս սպասելով ազգային ժողովի տնօրինութեան Ալիսի կաթողիկոսի առաջարկած կարեւոր հարցերը «ազգային» անունով և որոշում տալու համար, բայց հանդիպելով լուր ապարդիւն քուէարկութեանց և պոռոտախօսութեանց, Սոսի կաթողիկոսը ստիպված գտնվեցաւ գիմնի Բ. Գրան ինքնագրով գործելու իրաւունքի համար իր միճակի մէջ: Բ. Գրանը ի հարկէ ուրախութեամբ տեսաւ այդ իրաւունքը բար աւթով: Ո՞վ է մեղաւոր...

ԳԵՐԳՈՐ ՆԻԿՈԼՈՒՅԱՆ

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՏԵ

Ինչպիսիք ենք «Մշակի» բաժանորդներից, որոնք զեռ չեն վճարի ներկայ և անցեալ տարվայ լրագրի բաժանորդագինը, շուտով հասցնել մեզ իրանց վրա մնացած պարտքը: «Մշակին» կարելի է գրվել 5 ամսով, այսինքն օգոստոսի 1-ից ներկայ 1881 թւի մինչև յուլի 1-ը 1882 թւի, վճարելով 5 ռուբլի: Խմբագիր—հրատարակող ԳԵՐԳՈՐ ԱՐԺՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ա Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Գ Ա Մ Ա Ռ - Գ Ա Թ Ի Պ Ա Յ Ի

Բոլոր բանաստեղծութիւնները ժողովա-
ծուն, տպած Մօսկվայում ամենաքննարկով թղ-
թի վերայ, հեղինակի վրանդի պատկերով.
Գրքեր 50 կ. վաճառվում է ԿՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱՎԱՅԱՌԱՆՈՑՈՒՄ.

Նոյն տեղը վաճառվում են հետեւեալ նոր
հրատարակութիւնները.

- 1) Ռոբինզոն-Կրուզօ՝ Աղանեան " 60 կ.
- 2) Աճէզի տոպրակը՝ Լալայեան " 10 "
- 3) Ծաղկաքաղ արձ. և չափ.
բանից՝ Կոստանեան " 25 "
- 4) Ուսուցիչ հայոց լեզուի՝
Նազարեան " — " 40 "

Վերջին երկու գրքերը քերական
մարդիկ գնորդները նշանաւոր գիշումն են
ստանում:

144 Արքունիում դաշնէա 144
ամենաէական պահաւ
մեքէի և հայեթներ:

ՄՐԾԱԿՆԵՐ Կոտորելու փոշի:
Ծախվում է ծԱՏՈՒՐՈՎ Ի Լաւ
պի մագաղիւնում:

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻԶ
անունով ՄԵՐ ԵՐՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՅ
գրքագիրը լոյս տեսաւ և ծախվում է
Կովկասեան ու Կենտրոնական զրափաճա-
ռանցներում:

Գրքն է 40 կօպէկ:

Իսկ ով ցանկանում է հատը 35 կօպէ-
կով ձեռք բերել, գրքը ԿԱՆԻԻԿ վճա-
րելով և ճանապարհահատը իր վրա
առնելով:

Թող գրէ մեզ հետեւեալ հասցեով.
"Յ. Թիֆլիս. — Ու Աւլաբարձ. Ի-
վան Ետրովիչ Նազարեանց."

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ
ԲԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մուրա-
նէր, Կոնֆէկանէր, ԿԱԿԱՍ, բրինձ, Ա-
ՄԱՆԵԼԷՆ, բոկանէր, Թասեր, երես լուա-
նայու ամաններ, չայիներ, ԲԱԺԱԿՆԵՐ,
կերակրի ամաններ (սյճէի), մատուցարան-
ներ, ԿՈՂՊԵՔՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, գլաններ,
ԳՐԻՉՆԵՐ, Թուղթ, մատիտներ, տետրակ-
ներ, ՀՐԱՑԱՆԵՐ, ԲԵՎՈՂՎԵՐՆԵՐ, ալբոմ
ներ, ՄԱՀԱԿԱՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, արիօ, պա-
րուսին, Թաշկինալներ, երեքընդերս, կիծոն-
կա, գուլամներ, ԹԱՄԲԵՐ, ՊՈՐՏ-ՎԵՅՆ, խե-
րեւ, կոնեակ և այլն: Թէ՛ մեծ քանակու-
թեամբ ՎԱՅԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԿԸ
44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54
ր., և այլն: Այդ բոլորը կարելի է գտնել
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷԶ:

Մի և նոյն տեղը էժան գնով. ԾԵՐԲԵՏ մա-
գնեղիս, խմոր ԾԱՐԱԻՒ ԴԷՄ, ԽԵՆԱՅԻ ԳԻ-
նի ջիւմի ԴԷՄ, կարբօնի ֆՕՇԻ, հեղուկ
և ՍԱՊՈՆ, բժշկական Թուղթ փառերկրօգե-
տի համար, պարական փոշի:

52—100

Հրատարակութեամբ Ներսիսի Սիմէօնե-
անց լոյս տեսաւ գերմանացի բժիշկ Ներսիսի
"Տնային բժշկական մարմնամարզութեան"
գրքի հայերէն թարգմանութիւնը 45
պատկերով, որոց միջոցաւ կարելի է
կատարել առողջապահական բազմաթիւ
մարմնամարզական կրթութիւններ ամեն
տեղ, ամեն ժամանակ և առանց գործիքի:
Նա յարմարացրած է ամեն հասակի արանց
և կանանց համար: Գրքն է 40 կօպ. Ծախ-
վում է "Կենտրոնական և Կովկասեան զրա-
փաճառանցներում, նոյնպէս և պ. Մ. Վար-
դանեանցի մօտ." Тройцкій пер. типо-
графия Вартанянца, въ Тифлисе.

Ա. Դ. ԷՆ Ծ ա խ վ ու մ է
"ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻԶ"
Անունով մեր ՀՈՐՐՈՐԴ տարուայ
գրագիրը Կենտրոնական և Կովկասեան
զրափաճառանցներում:

Գրքն է 60 կօպէկ
Գումարով առողջներին գիշումն կը լինի:
Իսկ ով ցանկանում է հատը 55 կօպէ-
կով ձեռք բերել, գրքը ԿԱՆԻԻԿ վճա-
րելով թող գրէ մեզ հետեւեալ հասցեով.
Յ. Թիֆլիս. — Ու Աւլաբարձ. Ի-
վան Ետրովիչ Նազարեանց.

Յ. Նազարեանց
4—25

Въ Редакции газеты
"МПАКЪ"
Продается
"ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМАНЪ."
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ.
Ն Ո Ր Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Տեղափոխեցաւ Գ ա ն օ վ ա կ ա յ ա փո-
ղոցի աւելի յարմարաւոր տեղ, այն է՝
ՏՐՈՑԻՑԻ փողոցը № 11. փօստատան
հաւել քուչան ընդունվում են ամեն լի-
զուով և ամեն տեսակ պատուէրներ ամե-
նամատչելի գներով:

Նոյն տպարանում ընդունվում են և պա-
տուէրներ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ
տպագրութեան համար փայտի և պղնձի
վրա:

"Խ Ե Ն Թ Ը"

ԱՐԿԱՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՄ-ՓՈՐԻՔԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱՅԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ՐԱՑՖԻՐ

Ցպլած մաքուր թղթի վրա, գիրքը բաղ-
կանում 400 կրկնից: Թիֆլիսում ծախվում է
"Մշակ" խմորադրամներ, "Կենտրոնական
զրափաճառանցում" պ. Զաքարիա Գրիգորեան-
ցի մօտ, և պ. պ. Նահիմեանցի, Բազար-
ջեանցի, Հովսեփեանցի ծխախոտի մագաղի-
ններում:

Գրքն է 1 թուղ 20 կօպ:

ԵՂԲԱՐՔ Կ. ԵՒ Ս. ՊՈՊՈՎՆԵՐԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՆԻՑ

Մ Օ Ս Կ Վ Ա Յ ՈՒ Մ

Գրասենեակը Կոնկէցի կամրջի վրա, Կ. Ս. Պոպովի տանը:
Պատու ունենք յայտնելու հատարակաց գիտութեան, որ մեր Ֆիրմայի ԹԷՑԻ
առեւտրի համար բաց արինք նորերումն նոր խանութներ և հետեւեալ քաղաքներում:
ԽԱՐԿՈՎ ՈՒՄ—Պետրովսկի փողոցի վրա, սեփական տանը
ԹԻՖԼԻՑՈՒՄ—Գոյոզլիսկի պրոսպեկտի վրա, Միրիմանեան տանը:
ՍԵՎԱՍՏՈՊՈԼԻՍ—Բոլշոյ-Մօրսկոյ փողոցի վրա, Կոզէն վաճառականի
տանը:

Ինչպէս այս, նոյնպէս և առաջուայ խանութները Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ:
ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ և **ԿԻԵՎՈՒՄ**—Թէյն որ առած է Փոլսոյի, կէս
Փոլսոյի և քառորդ Փոլսոյի, ուղարկվում է մեր գլխաւոր պահեստի խանութից,
որ գտնվում է Մօսկվայում, Կրասնոսելսկի փողոցի վրա, սեփական տանը: 7—30

Վերականգնող ՄԱԿ-ՄԱՍ-
ՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց
ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ փորագա-
ւանդ: Գրքը 2 ր. շերտ, ՓՈՍՏԱ-
ՅՈՎ ուղարկված 2 ր. 49 կօպ.
ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ



Մի և նոյն տեղը ԽԻՆԱՅԻ
ԻԿՂ, մազերը ամրացնող հա-
մար, 1 ր. ամանը վրձին գլխա-
ցաւի դէմ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱ-
ՊՈՆ և հոտաւէտ ջրեր և այլն:
16—100

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

ՏԱՐԲԱԿԱՆ ՈՒՍՈՒՄ ՆԱՐԱՆՈՒՄ

Ընդունելութիւնները սկսվում են օգոստոսի 20-ից, իսկ ուսումը սեպտեմբերի
1-ից: Մանկական պարտէզի մէջ ընդունվում են մինչև 7 տարեկան երեխաներ, իսկ
«Տարրական ուսումնարանում» մինչև 13 տարեկանները:
Իշխան Ն. Ամատուտու տուն, Վելիամիտովսկի փողոցի վերայ:

Բ. Միրիմանեանց

Մամուլի տակն է, և շուտով լոյս կը տեսնի Ս. Մանգրինեանի հետեւեալ
աշխատութիւնը. **"ԿԵԱՆՔԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ**
ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ" ծխական դպրոցների 4-րդ տարվայ դասընթացը,
և միանգամայն 1-ին, 2-րդ և 3 տարիների համար հրահանգ:
Ստարաքաղաքացի կարդ կը գրմէլ այս հասցեով. Թիֆլիս, Михаилу
Н. Теръ-Никогосову.

58—150

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԲԷԼ (տիպոնէր և բազմաթիւ) ծախվում են մեծ
քանակութեամբ և մանր, միջին փողոցում Կատարիկաց փողոցի սնկիւնում ՄԻ-
ԲԱՅԷԼ ՏԵՐ-ՆԻԿՈԼՈՍԵԱՆԻ պահեստում:
Օտարաքաղաքացի կարդ կը գրմէլ այս հասցեով. Թիֆլիս, Михаилу
Н. Теръ-Никогосову.

ПРИСЯЖНЫЙ ПОВЕРЕННЫЙ
А. С. ФРЕНКЕЛЬ
Переѣхалъ на Сололакскую ули-
цу, въ домъ К. Меликова.

ԵՐԴՎԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ
ՍԵՐԳԷՅ ՎԱՍԻԼԵՎԻԶ ՉԵՄԵ-
ՍՕՎ տեղափոխեց իր բնակարանը Արսե-
նախայտ փողոց "Կրեմլ" շինութեան
հաւել, Գարբուսովի տանը: 4—5 (1)

ԹԷՑ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱ-
ՆԱԶՈՂՆԵՐԸ պէտք է գտնել **ԱՆ-**
ԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ թէյ
լու տեսակի Փոլսոյ 1 ր. 20 կ. և 2 ր.
և համեմատեան առաջինը 1 ր. 60 կ. հեռ
և երկրորդը 3 ր. հեռ ամեն տեղ **ԹԻՖ-**
ԼԻՍՈՒՄ, որպէս զի իմանան Անգլիա-
կան խանութի մէջ ծախվող ամեն տեսակ
թէյի համեմատական **ԳԵՐԱԶԱՆ-**
ՑՈՒԹԻՒՆԸ: Բացի այդ Անգլիական
խանութը կը աւում է **ՄԱԳՈՒՐ ԹԷՅ**
առանց թղթի և ԱՐՃՃԻ:
37—100

ՀԱՒԱՏԱՐՈՒ Ս. ՄԱՐԻՍ.
ՄԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՅ ԿՈՐՈՑԻ
վարչութիւնը պատու ունի յայտնել
յարգող հատարակութեանը, որ
օգոստոսի 20-ից դպրոցը **ԸՆԴՈՒ-**
ՆՈՒՄ Ե ԱՇԱԿԵՐՏՈՒՅԻ
ՆԵՐ ամեն օր, առաւօտեան ժամի
8—12-ը: Հասցէն՝ Լազարեանի փո-
ղոց, տուն պ. Միլիք-Շահնազարեանցի:
1—5

ՎԵՐԱԿՈՒՆԵՐ 4 ր., ճըճողներ 1 ր.,
ճալիղ աթոռներ 1 ր. 50 կ., ՔԱՅՏ-ԱՌՈՒ
4 ր., ԲԱԶԱՌՈՒՄ-ՄԱՀԱԿԱՆ 10 թուղ և
աւելի, Թէյի բաժանիկ 25 և 30 կ., մի
աման քորոցներ 50 կ., պատուէա ծխողների
համար 60 կ. Փոլսոյ, Անգլիական ՎԱՆՆԱ-
ՆԵՐ և այլն ծախվում են **ԱՆԳԼԻԱ-**
ԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷԶ:
10,000 զոյգ գուլամներ 25 կ.—յոյ զոյգը,
10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԱՆԵՐ 30 կ.—
1 ր., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ր.,
1,000 ՄԱՀԱԿԱՆՆԵՐ 5 ր.—35 ր., 400
արշին բոմպէյ 1 ր.—1 ր. 30 կ., պա-
րուսինա 40 կ.—1 ր., 300 հատ րէզոլիեր
4 ր.—35 ր., 700 պրոմ ԿԻՍԱԿԵՆՈՎ, 10,000
ֆուլտ Թէյ ԹԷՑԱՄԱՆՈՎ 1 ր. 65 կ.: եր
կաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի հա-
մար: Ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ**
ԽԱՆՈՒԹԻ մէջ:
34—100